# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1069-Ա « 21 » մարտի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի Հ.2690-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 12.09.2023 թվականի N ԱՏ-12092023-01-0501 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2023 թվականի օգոստոսի 17-ի «Երևան, Շենգավիթ, Ն.Շենգավիթ 6-րդ փողոց հ.23 հասցեի բնակելի տանը կից հողամասի նկատմամբ Օլեգ Արտաշեսի Ստեփանյանի իրավունքները վերականգնելու մասին» հ.2690-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա, ք.Երևան Ն.Շենգավիթ 6-րդ փողոց հ.23 հասցեի 264.84քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման նախաբանում՝ «824.84» թիվը փոխարինել «838.56» թվով.

3) Որոշման 1-ին կետում՝ «264.84» թիվը փոխարինել «278.56» թվով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**